

ՀԱՅ ԿԵԱՆՔ ԵՒ ԵԿԵՂԵՑԻ

ԱԶԳԱՅԻՆ

ՀԱՅ ԵԿԵՂԵՑՈՒ ԲԱՐԵԿԱՐԳՄԱՆ ԽՆԴԻՐԸ.

Նոր չէ այս խնդիրը և ոչ էլ թեր ու դէմ խիստ տա-
րածայնութիւնների պատճառ եղող:

Վաղուց թէ հոգևորականների, թէ աշխարհականների
մէջ այս հարցը քննութեան նիւթ է եղել. ոչ միայն լրա-
դրական, ամսագրերի յօդուածներ են նուիրած դրուած
հարցի պարզաբանութեան, այլ և յատուկ աշխատութիւն-
ներ են լոյս տեսել մեր եկեղեցու այս ու այն՝ քահանա-
յական, կալուածական, դպրոցական խնդիրները պարզա-
բանող, վարչական կազմակերպութիւնները կանոնաւորելու
ձգտող:

Դեռ աւելին կայ. մենք ունեցել ենք ազգային հա-
մագումար 1906 թուին, մեզ յայտնի է, որ մեր եկեղեցու
և ուսւ պետութեան յարաբերութիւնը կարգաւորող Պօլօ-
ժէնիայի այս ու այն կէտերը փոփոխելու համար դիմում-
ներ, ծրագրներ, առաջադրութիւններ են եղել, կազմուել:

Բոլորիս էլ քաջ յայտնի է, որ Պօլօժէնիան բիւրօ-
կրատիկ կառավարութեան քմահաճոյ ցանկութիւնների մի
ժողովածու է միայն և մեր եկեղեցու ոգուց շատ ու շատ
հեռու: Որ Պօլօժէնիայով նախատեսուած Սինօդը հայոց
հայրապետների համար հազիւ տանելի հիմնարկութիւն է
եղել ու միշտ էլ կիսատ, սլաատ կազմով գոյութիւնն է
պահպանել, որովհետեւ պետութիւնը յանձին դատախազի
(սլրօկուրօրի) իր հսկողութիւնն է աշխատել ուժեղացնել
մեր կեանքի այս ու այն կուլտուրական ձեռնարկութիւն-
ների վրայ:

Գիտենք և այն, որ ամեն անգամ, երբ միապետական

կառավարութիւնը ուղեցել է մեր եկեղեցու այս կամ այն իրաւունքը՝ կրճատել բուն բողոք է տեղի ունեցել ժողովրդի կողմից. յիշենք՝ երգումը ուսերէն լեզուով տալու, դպրոցների փակման, կալուածների գրաւման, ծխական դպրոցների ուսուցիչների հաստատման խնդիրները:

Սրանք դեռ հրապարակ եկած, աղմուկ հանած, ցոյցերի պատճառ դարձած հարցերն են: Բայց մենք ունենք քահանայական, վանքերի, եկեղեցու ներքին բարեգործութեան հարցեր ևս, որոնք երկար տարիներ միշտ էլ քննադատութեան են ենթարկուել և դժբախտաբար մնացել անկատար:

Կասկածից դուրս է, որ միասլետական կառավարութեան օրերում, երբ հայահալած քաղաքականութիւնը ոչ միայն դիպլոմատների բերանով էր յայտարարւում ի լուր քաղաքակիրթ աշխարհի, այլ և գործադրւում էր պարզ (Գօլիցինի ժամանակը) կամ քողարկուած (Դաշկովի ժամանակը) ձևով, մենք հազիւ ոյժներս լարում էինք եղածը օրհնելու և հնարաւորութիւն չունէինք մեր ազգային կեանքի յառաջադիմութեան, մեր բարոյական—կրօնական կեանքի կանոնաւորման համար 16 դար անընդհատ աշխատող հիմնարկութեան բարեփոխութեան մասին մտածելու:

Այժմ, երբ համայն Ռուսաստանն է ազատագրութեան արժանացել, երբ նոր կառավարութիւնը խօսքի, մամուլի, խղճի, ժողովների ազատութիւնն է տուել, երբ վերացել են ազգային, դաւանական սահմանափակումները, երբ փոքր ազգերին ևս ինքնուրոյն զարգանալու, իրենց կուլտուրան առաջ տանելու հնարաւորութիւնն է տրուել, բնականաբար պարտաւոր ենք մեր եկեղեցու բարեկարգութեան հարցով լրջօրէն, բազմակողմանի կերպով զբաղուելու:

Մեր եկեղեցու առանձնայատուկ կողմերից մէկն այն է եղել, որ նախ ժողովրդական կառավարութեան սկզբունքներ է գործադրել իւր կեանքում. օրինակ կաթուղիկոսի ընտրութիւնը, քահանաների ընտրութիւն, հոգաբար-

ձութիւններ, թեմական խորհուրդներ, ազգային-եկեղեցական ժողովներ: Երկրորդ՝ մեր եկեղեցին միշտ կեանքի պայմաններին ընդառաջ է գնացել ու հասունացած, ողջմիտ սկզբունքները իր մէջ է առել. նա կեանքից չէ կտրուել կաթոլիկ եկեղեցու նման ու չէ ստեղծել ուրոյն շահերի, ուրոյն աշխարհի հետևող դաս, այլ միշտ եղել է ժողովրդի աջակցութեամբ պահուող, նրա հսկողութեանը ենթակայ:

Ուստի մի կողմից մեր եկեղեցու մինչև այժմ արդէն հասունացած խնդիրները, միւս կողմից՝ մեր եկեղեցու ոգին, ներկայ վերաշինութեան—վերակազմութեան հրատապ պայմանները երրորդ կողմից ինքնին հրապարակ են հանում մեր եկեղեցու բարեկարգութեան խնդիրը. որով և պէտք է գրադուենք, որի լուծումը մեր կեանքի կանոնաւորութեան համար անհրաժեշտ է:

Բնական է, որ այժմ, երբ ընդհանուր պետական նոր իրաւակարգը ամրացնելու, ձեռք բերած ազատութիւնները խարսխելուն ծանր ու առաջնակարգ հարցն է դրուած մենք ամենից առաջ մեր ոյժերը պիտի լարենք այդ ուղղութեամբ: Մասնաւոր պահանջները կիրականանան, լուծում կստանան այն ժամանակ, երբ հիմնական ընդհանուր իրաւակարգը ամրապնդենք, անխուսափելի դարձնենք:

Ուստի և դեռ մեր ուշադրութեան կենդրոնը նոր կառավարութեանը ըստ ամենայնի աջակցելու, նրա ժողովրդի ազատագրութեանը վերաբերող պահանջները կատարելու մէջ պիտի լինի:

Դրա հետ միասին մենք պէտք է անուշադրութեան չմատնենք և մեր ազգային ազատ դոյութեան ու դարգացման վերաբերող հարցերը, որոնցով գրադուելու, բռնելու, ուսումնասիրելու պարտականութիւնն ունինք:

Շատ են այդ հարցերը, ծանրակշիռ և մեր պատմական գոյութեան ուրոյն պատճառների շնորհիւ դրանք գրեթէ բոլորն էլ կապուած են մեր եկեղեցու հետ: Ուստի և մեր կեանքի կանոնաւորման հարցով պարապողները առաջին իսկ քայլից այդ խնդրին պիտի հանդիպեն. ինչպէս և արդէն մամուլում, ժողովներում լուծւում են ձայներ, պահանջներ:

Բնական է, որ նոր իրաւակարգը այժմ մեզ հնարաւորութիւն է տալիս աւելի ազատ, անկախ տնօրինելու մեր ազգային դանադան հարցերը և եկեղեցին ինքը իր իսկ բարգաւաճման, ծաղկման տեսակէտից ընդառաջ է գնալու և աշխատելու է ժողովրդի յառաջագիւմութեանը աւելի մեծ չափով եւ աւելի ապահով ձեւով նպաստող պայմաններ ստեղծել:

Յատկապէս ընդգծում եմ այս խօսքերն այն պատճառով, որ դրսում, մանաւանդ երիտասարդ սերնդի մէջ այն թիւը կարծիքը կայ, որ մեր եկեղեցին էլ կղերական ոգի ունի, որ նրանից պէտք է ազատագրուել, որ նրա իրաւունքները պիտի խլել և այլն, մտքեր, որոնք միայն մեր եկեղեցուն, մեր կեանքին անծանօթ լինելու հետևանք են: Ամենից առաջ չպէտք է մոռանալ, որ մեր եկեղեցու ոգուն հարազատ ընտրական սկզբունքը լայն չափերով չի գործադրուել, ոչ թէ նրա համար, որ եկեղեցին դէմ է եղել դրան, այլ, որ բռնապետութիւնն է արգելքներ յարուցել: Որ եկեղեցին մեր ազգային այս ու այն խնդիրն իւր ձեռքն է առել, որովհետեւ ժողովրդի միակ իրաւական բերան ներկայացուցիչը նա է եղել. ժողովուրդն ինքն է նրան այդ վստահացել, բռնապետ կառավարութեան ոտնձգութիւններից ազատելու համար: Եւ ի պատիւ եկեղեցու պէտք է ասել, որ նա ժողովրդի վստահացած իրաւունքները իր ոյժերի չափ պահել է անթերի ու յաջող:

Այսօր երբ դրութիւնը փոխուած է, երբ պայմանները բարեյաջող են, կարող են այդ իրաւակարգերը նորից ժողովրդին անցնել ու դրանով եկեղեցին աւելի կ'յառաջագիւմէ, կ'բարգաւաճէ, ժամանակ ու հնարաւորութիւն կ'ունենայ իւր անմիջական պարտականութեան կրօնական-բարոյական հարցով զբաղուելու, Փրկչի վարդապետութեան կենդանի սկզբունքները տարածելու: Հարցն այն է, թէ որ ձեւով ժողովուրդը աւելի շատ ու աւելի ասպանով եղանակով կ'օգտուի իր իրաւունքներից: Կարեւորն այն չէ, որ իրաւունք ունենանք, այլ այն թէ այդ իրաւունքը որքան ասպանով է մեր ձեռքում և որքան օգտակար է լինում:

Միթէ կան այնքան միամիտ հոգևորականներ, ինչ աստիճանի ու դիրքի տէր էլ ուզում է լինի, որ համոզուած լինելով, թէ այս ու այն իրաւունքը ժողովրդին անցնելով ժողովրդի յառաջադիմութիւնը աւելի լայն շափով կիրականանայ ու այդ իրաւունքը աւելի ապահով ձեռքում կլինի և նա կընդիմանայ, կխանդարէ: Եթէ կայ այդպիսին նա հայ եկեղեցու հարազատ հոգևորական չէ. նա օտար, եկամուտ ո՞նի է. հայ եկեղեցին ժողովրդի յառաջադիմութեանն է ծառայում. եթէ այդ եկեղեցու սպասաւորը այդպէս չէ, մտածում, նա պէտք է թողնէ ու ելնէ անմիջապէս, նրա տեղը հայ եկեղեցին չէ յամենայն դէպս:

Ըստ իս նման մտածողներ, եթէ կան էլ մեր եկեղեցում, շատ քիչ են ու աննշան են. մեր եկեղեցու բարեկարգութեան տեսակէտից դրանք վտանգաւոր չեն ու խոչընդոտ հանդիսանալ չեն կարող:

Վտանգը աւելի շուտ այն աշխարհականներից է, որոնք մեր կեանքի, մեր եկեղեցու էութեանն են անձանօթ և ընդունակ են 1906 թուի ժողովի մէջ եղած անախորժ դէպքերն ստեղծել, որոնք դժբախտաբար հասարակական զարգացման խնդիրը, հասարակութեան ինչ լինելը, ինչպէս ապրելը լաւ չեն իւրացրել, որոնք սօցիալիզմի անուան հետ կապում են անկրօնութիւն անազգութիւն դադափարները և այդ հիման վրայ շափ ու ձև են անում, մկրատ առնում իրենց ուզածի պէս ժողովրդի զարգացման նոր ուղիներ գծելու, նոր զգեստներ կտրելու:

Անշուշտ կարելի է, ձայնի, իրաւունքի ուժով ժողովրդի կեանքում այս ու այն ձևի փոփոխութիւններ մտցնել, առանց հաշուի առնելու այդ ժողովրդի ոգին, ըմբռնումը, կուլտուրական հասունութիւնը, շրջապատի ազդերի փոխյարաբերութիւնը և այդ իրաւակարգեր մտցնողները կարող են ասել, թէ արինք ու եղաւ: Բայց հարցն այն է, թէ օգուտը ո՞րն էր. ինչ եզրակացութեան բերեց նոր փոփոխութիւնը:

Ռուսական բռնապետութիւնն էլ ուժով մեր երկրում կարգեր էր մտցնում ու տարիներ տասնեակ տարիներ

այդ կարգերը մնում էին: Բիւրօկրատը համոզուած էր, որ իր արածը լաւն է, օգտակարն է: Նա հաշուի չէր առնում ոչ ժողովրդի ոգին, ոչ նրա հասունութիւնը: Բայց այժմ տեսնում ենք, լսում ու կարդում ենք ամեն օր, որ այդ իրաւակարգերը զօռով են փաթթել ժողովրդի վզին, որ դրանք եղել են վտանգաւոր ու փնասակար և ժողովրդի յառաջադիմութիւնը յետաձգել են մի քանի դարով: Եւ զրգարաւորաբար այդ բոլոր կարգերի պատասխանատուն մի քանի հարիւր, թող լինի մի քանի հազար մարդիկ են նկատուել. բայց չէ՛ որ մինչև սրանք էլ եղել են շատ, շատերը հազարներ տասնեակ, հարիւր հազարի համադրումներ, որոնք մեռել, գնացել են ու անպատասխանատու են մնացել:

Ուրեմն կարելի է զօռով մի բան անել և մնալ անպատասխանատու:

Մի անգամ ընդմիջաւ պիտի շեշտենք ուժգինա, որ պատմութեան դասաստանը չաւ է անարդար: Ի դուր մեղանում դեռ մամուլում խօսում են, պատմութեան արդար դատաստանի անունից:

Հապա ուրեմն նայեցէք ձեր շուրջը. ուր են դանաղան Պլէվէ-Պաօբեդենօսով, Տօլստոյ, Լօբանով-Ստօլիպիններ, Գոլիցին ինչ դատաստան եղաւ դրանց. բայց ներկայ մեծ յեղաշրջման ու հազարաւոր գոհերի պատճառների մէջ միթէ՛ դրանք տեղ չունեն՝ ունեն ու մնում են անպատասխանատու:

Այնպէս և մեր կեանքում եղել են անպատասխանատու գործիչներ, մտքրել են այս ու այն փոփոխութիւնը, հետեանքը եղել է վատ, իսկ իրենք մնացել են մի կողմը. կամ մեռած են եղել կամ առաւաւելն կենդանութեան ժամանակ մի կծու թթու խօսք են լսել. իսկ իրենց արածը չէ՛ որ ահագին փնասներ է բերել:

Ահա խնդրի այս կողմն է, որ ամենից առաջ մեզ պէտք է զբաղեցնէ. որ հասարակական կեանքում փոփոխութիւններ կարելի է լինում ուժով առաջ բերել, բռնութեամբ իւրացնել, (լինի դա բիրտ ոյժ, թէ ձայնի առա-

ւելութիւն, թուով մեծութեան ոյժ միւնոյն է), վատ հետեանքների հասնել ու անպատասխանատու մնալ:

Մեր եկեղեցու բարեկարգութեան հարցը արդէն հրապարակ է հանուած ըստ ինքեան և ամեն ոք ազատ է խօսելու այդ մասին. բայց մինչև խօսելը պէտք է հարցը ուսումնասիրել, գրադուել լրջօրէն. պէտք է նախ որոշել ժողովրդի յառաջագիմութեան խնդրի էութիւնը, նրան հասցնող ճանապարհը, ապա հրապարակ գալ ու խօսել:

Հեշտ բան չէ հասարակական կեանքում փոփոխութիւններ մտցնելը: Յիշեցէք Փրանսիական յեղափոխութիւնը, որ դարից աւելի է ու դեռ իր վերջնական նպատակներին չէ հասել. յիշեցէք անգլիացոց, որոնք տարիներ շարունակ մի հօմրուլի հարցով գրադուում են ու եզրակացութեան չեն կարողանում գալ, յիշեցէք, հէնց Ռուսաստանի 61 թուի, 1905-ի իրաւակարգերը և տեսէք ինչ դժուարութիւններ են տեղի ունեցել նրանց իրականացման համար:

Ճշմարիտ է մեր առաջ դուցէ այդ չափ մեծ հարցեր չկան, բայց դրա փոխարէն էլ մենք ազդովին քիչ ոյժ ունինք, փոքր են մեր սահմանները, սակաւ է մեր մտայինների թիւը. եթէ մենք անխնայ ծախսենք, սխալներ անենք ու տուժենք և մեր ոյժը կսպառի և մեր յառաջագիմութեան գործը կտուժի:

Դրա համար էլ պէտք է շատ մեծ պատասխանատուութիւն զգալով մեզ վրայ, լաւ ուսումնասիրելուց յետոյ հարցը, լրջմիտ ու անկեղծ վերաբերմունք ունենալով մօտենանք խնդրին: Մի բան պիտի պարզ լինի, որ եկեղեցու բարեկարգութիւնը անհրաժեշտ և պարզ է այն, որ մեզանում գոյութիւն չունի հոգևորականութեան ու աշխարհականութեան մէջ հակամարտութիւն էական. սկզբունքների նկատմամբ, որ եկեղեցին երբէք ոչ եղել է ու ոչ էլ կլինի բիւրօկրատիկ հիմնարկութիւն, ուրոյն շահերի ձգտող: Ուրեմն մնում է խնդիրը ուսումնասիրել ու պատրաստուել լրջմտօրէն:

Որ պատրաստուելու կարիք կայ այդ պարզ է և նրա-

նից, որ մեր գրութիւնը այժմ սոսկալի է, մեր ժողովրդի մեծագոյն մասը այժմ կամ գաղթականի, կամ աքսորականի վիճակ ունի, մեր հայրենիքի մեծ մասը կամ սլաւերագմի վայրն է կամ թշնամի պետութեան ձեռքին է և այդ երկրի ապագայ իրաւակարգը դեռ պարզ չէ. մեր ժողովրդի որոշ մասերն էլ գաղութներում են ապրում՝ Եգիպտոս, Ամերիկա, Եւրոպա, իսկ մեր եկեղեցին համազգային է և նրա մէջ հիմնական բարեփոխութիւնների մտցնելու համար անպայման պէտք են և այդ երկրների ու այդ տեղերի հայերի մասնակցութիւնը, ձայները:

Միւս կողմից մենք ունինք Պօլօժէնիայի, ազգային սահմանադրութեան, Պօլսի, Երուտաղէմի պատրիարքութիւնների, Կիլիկիայի կաթողիկոսութեան ու այս տեղերում եղող ազգային սեփականութիւնների, դպրոցների, հիմնարկութիւնների հարցեր:

Զմոռանանք ամենևին և այն, որ մեր հայրապետութիւնը միջազգային իրաւակարգում իր տեղն ունի, որ մեր հայրապետները այս կամ այն ձևով ազգային խնդիրներում Եւրոպական պետութիւնների առաջ երևան են եկել ու դալիս են այժմ էլ:

Կան և այլ կրօնա-բարոյական, տնտեսական իրաւական հարցեր կապուած մեր եկեղեցու անցեալի, մեր գուտ հայկական եկեղեցական իրաւակարգի հետ, որոնք նոյնպէս պէտք է ուշադրութեան առնուեն:

Պարզ է ուրեմն, որ մեր առաջ գրուած հարցը առաջին հայացքից մինչ թւում է հեշտ լուծելի, մի միտինգի, մի ժողովի նիւթ, իրօք նա ծանրակշիռ է ու երկար աշխատանքի, ուսումնասիրութեան ու շրջահայեցողութեան է կարօտ:

Զմոռանանք երբէք, որ մենք այնուամենայնիւ փոքր, հսկատակ ազգ ենք, որ մենք ունինք հարևաններ, որ մենք ցրուած ենք ու դեռ մի կտոր ազատ հողի տէր չենք:

Զղանդաղենք, բայց որ դիտաւորն է չշտապենք. այլ շրջմիտ պատրաստուենք մեծ գործի համար:

Գիւտ վարդ.